

ՄԱՐԶԵԹԻՆԳ

ԱՐՄԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀՊՏՀ մարքերինգի ամրիտի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր,
պլոտինոր

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ մարքերինգի ամրիտի դրցենու,
տնտեսագիտության բեկմածու

ՄԱՐԶԵԹԻՆԳԸ ԵՎ ՄԵՆՔ ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ՇՐՋԱՆՑԵԼ ՄԱՐԶԵԹԻՆԳԸ

«Մարքերինգ» հասկացությունը տնտեսագիտական գրականության մեջ նոր երևոյթ չէ և շրջանառության մեջ է դրվել դեռևս XIX-XX դարերուն: Բովանդակային ու տերմինաբանական առունով այն մշտապես հարատացել և ավելի ընդգրկուն ու բազմարութանդակ է դարձել: Էականորեն փոփոխվել են նաև մարքերինգային փիլիսոփայությունն ու գործիքակազմը: Եթե սկզբնական շրջանում այն կապվում էր ավելի պարզ ապրանքային-ֆինանսական հարաբերությունների, փոխանակման գործընթացների, արտադրողական և սպառողների և սպառողների միջև ապրանքների իրացման և ծառայությունների մատուցման փոխարարքերությունների հետ, ապա ներկայունս առավելապես դիտարկվում է իրքը կազմակերպությունների սոցիալական պատասխանատվության բարձրացման, արտադրող-սպառող-հասարակությունների մատուցման փոխարարքերությունների հետ, ապա ներկայունս առավելապես դիտարկվում է իրքը կազմակերպությունների սոցիալական պատասխանատվության բարձրացման, արտադրող-սպառող-հասարակությունների ձևավորման, բիզնեսի միջազգայնացման գործընթացում ազգային և միջազգային միջավայրերի միջև տարածայնությունների հաճախարթեցման միջոց:

Ուշագրավ է, որ հաճաշխարհային տնտեսության զարգացման ներկա պայմաններուն մեզ շրջապատող աշխարհը դառնում է ավելի միասնական, ամելի փոխլավակցված, և երկրների զարգացումն անհնարին է դառնում ներփակման պայմաններուն: Ուստի այժմ առանց մարքերինգի, մարքերինգային բազմակրողմանի հետազոտությունների ու ռազմավարությունների մշակման ոչ միայն արտադրական կազմակերպությունները, այլև երկրներն անբողջությամբ չեն կարող երկարաժամկետ տնտեսական հաջողություններ արձանագրել, մտնել հաճաշխարհային շուկա, դիմանալ մրցակցությանը և մրցունակ լինել այս կամ այն ոլորտում: Նշված խնդիրների արդյունավետ լուծումն առաջին հերթին պայմանավորված է մարքերինգով, որովհետև ամեն օր երկրագնդի բնակչությունն այս կամ այն շուկայում կատարում է խոշոր կամ փոքր չափերի գնումներ՝ փնտրելով այնպիսի ապրանքներ, որոնք, որպես սպառաժեր, առավելագույնս կհամապատասխանն իր կարիքներին, պահանջմունքներին և, որ ամենա-

կարևորն է՝ ակնկալիքներին: Թեև գիտությանն անտեղյակ սպառողները չեն կարող մարքեթինգը տեսնել որևէ ապրանքի կողքին կամ նույն փաթեթավորման մեջ, բայց զնորդը մշտապես զգում է մարքեթինգի գոյությունը, հատկապես այն դեպքում, եթե զնված ապրանքն իրոք համապատասխանում է իր ճաշակին և արտադրված է համապատասխան պահանջմունքների բավարարման համար:

Ուշագրավ է, որ, չնայած պահանջվածության բարձր աստիճանին, XXI դարի սկզբին մարքեթինգը, իբրև գիտակարգ և գործունեության ձև, հայտնվել էր խոր ճգնաժամում: Ասկածի մասին առաջին բարձրաձայնողները հենց մարքեթինգի հեղինակավոր մասնագետներն էին (Շ. Կելլի, Ն. Կումար, Դ. Լիման, Ֆ. Վերստեր, Դ. Կրևենս և այլք): Խնդիրների մասին հիմնականում սկսեցին խոսել 2000 թվականին FTSE ընկերության և մի շաբթ այլ հայտնի բրիտանացի վերլուծաբաններ բրիտանական և ամերիկյան ընկերություններում համատեղ անցկացված հետազոտության արդյունքների հրապարակումից հետո: Նշյալ հետազոտության ընթացքում բացահայտվել էր, որ հարցված մոտ 5000 կազմակերպությունների դեկավարների միայն 18%-ն է սեփական մարքեթինգի բաժնի գործունեությունը զնահատել գոհացուցիչ, 36%-ի կարծիքով այդ գործունեությունն անբավարար է կամ վատ: Ուսումնասիրությամբ պարզվել էր նաև, որ դիտարկված կազմակերպությունների բարձրագույն դեկավարության ընդամենը 13%-ն է մարքեթող, այն դեպքում, եթե ֆինանսական մենեջերները կազմում են կազմակերպությունների բարձրագույն դեկավարության 26%-ը, իսկ խորհրդակցությունների ընթացքում մարքեթինգային խնդիրների ընսարկմանը բաժին է հասնում խորհրդակցության տևողության ընդամենը 10%-ը¹: Արդյունքների մասին խոսելիս ուազնավարական մարքեթինգի դպրոցի ներկայացուցիչ Ն. Կումարը մեջբերում է մարքեթինգային հետազոտությունների առաջնակարգ մասնագետներից մեկի՝ Դ. Լիմանի խոսքը. «Ընկերությունների մարքեթինգի բաժիններին ներկայումս սպառնում է ընկերություններում ազդեցությունն իսպառ կորցնելու վտանգը... Ոմանք արդեն համարում են, որ մարքեթինգի բաժնի խնդիրը գովազդային արշավների կազմակերպումն ու գեղչային կտրունների տարածումն է», ինչպես նաև արդյունաբերական մարքեթինգի հիմնադիր համարվող Ֆ. Վերստերի խոսքը. «Կազմակերպության մարքեթինգի բաժինները կորցրել են իրենց ուազնավարական նշանակությունը»²: Նման իրավիճակը տարբեր հեղինակներ պայմանավորում են նրանով, որ մարքեթողները հիմնականում սիալ են պատկերացնում կազմակերպության բարձրագույն դեկավարության պահանջները և ձգտում են լուծել մարքեթինգ-միքսի 4P-երին առնչվող օպերատիվ-մարտավարական խնդիրները, մինչդեռ դեկավարությունը մարքեթինգի բաժնից ակնկալում է այնպիսի ուազնավարական խնդիրների համալիր լուծում, ինչպիսիք են՝ գործարարության նոր հնարավորությունների բացահայտումը, ուժեղ բրենդների ձևավորումը, բաշխման կապութի-

¹ Տե՛ս Կumar H., Маркетинг как стратегия. Роль генерального директора в интенсивном развитии компаний и внедрении инноваций, пер. с англ., М., „Претекст”, 2008, էջ 22-23:

² Տե՛ս նույն տեղը, էջ 24:

ների կառավարումը, ինչպես նաև, մեծ ընդգրկմամբ, կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացումը:

Մյուս կողմից՝ բացի գործարար շրջանակներից, մարքեթինգի քննադատությունը մեծանում էր նաև գիտական միջավայրում, ինչպես նաև սպառողների շրջանում: Քննադատությունը գիտական մակարդակում առավել համընդիմանուր ու հիմնավորված կերպով ներկայացրել է Ը. Կելին իր «Մարքեթինգի մայրամուտը» աշխատության մեջ, որում, ընդհանրացնելով շուկայաբաններին ներկայացվող «մերադրանքները», նշում է, որ կազմակերպությունների մեծամասնության կողմից մշակվող և իրագործվող մարքեթինգային և գովազդային քաղաքականությունները առաջ են քաշում մի շարք լրջագույն խնդիրներ, որոնք ոչ միայն բացասարար են ազդում սպառողական մշակույթի վրա, այլև ստեղծում են այնպիսի պայմաններ, որոնք փոքր և միջին ձեռնարկությունների և հատկապես զարգացող երկրների կազմակերպությունների համար դիմակայելի չեն³: Այսպես՝ Կելին նշում է, որ մարքեթինգը.

- հնարավորինս փորձում է անտեսել մշակութային գործունը, ինչը շատ դեպքերում անցանկալի հետևանքների է հանգեցնում՝ բազմաթիվ երկրների սպառողներին ստիպելով «ընդվզել» արտադրողների դեմ,

- հեղինակային իրավունքները վեր է դասում մարդու իրավունքներից. հատկապես զարգացող երկրներում, որտեղ դեռ հստակեցված չեն ժողովրդավարության սկզբունքները, շատ դեպքերում մարդու իրավունքները տուժում են առևտրական հարաբերություններում՝ հեղինակային իրավունքներին առնչվող գործարքներ իրականացնելիս,

- խրանում է նաև անառողջ և վտանգավոր արտադրական տեխնոլոգիաների կիրառումը. առաջնային նպատակ համարելով կազմակերպության համար շահավետ տարբերակով շուկա ապրանքների ներմուծումը և ազրեսիվորեն նպաստելով վերջիններիս սպառմանը, դրանց դրական կամ բացասական ազրեցություններին եզակի է արձագանքում,

- նպաստում է գների անընդհատ բարձրացմանը. ներկայումս ապրանքի բացրողներն զին ավելի քան 70%-ը կազմում են իրացման խրանում և մարքեթինգի ծախսերը, ի դեպք, մարքեթինգային խորհրդատվության ոլորտն աշխարհում ամենաարագ թանկացողներից մեկն է,

- խրանում է էկոլոգիական տեսանկյունից վտանգավոր արտադրատեսակների սպառումը. այսօր բազմաթիվ արտադրատեսակների արտադրություն, որը կազմակերպվում է շուկայի հետազոտության արդյունքում, անտեսում է բնապահպանական շատ խնդիրներ, և սպառողների գերակշիռ մասը պարզապես անտեղյակ է վերջիններիս պատճառած վնասի չափեցից⁴:

Սակայն հատկանշական է, որ անգամ նման սուր քննադատության ժամանակահատվածում ընկերությունների մարքեթինգային ծախսերն ամբողջ աշխարհում շարունակել են աճել: Ինչպես կարելի է բացատրել մարքեթինգի դերի նվազման և գործարար շրջանակներում դրա նկատմամբ

³ Տե՛ս Կելին Ռ., Զակատ маркетинга. Մ., „Պոկоление”, 2007, էջ 54:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 25-49:

անվտահության մեծացման պարագայում մարքեթինգային ծախսերի անընդմեջ աճը: Բանն այն է, որ մարքեթինգի զարգացման, այսպես կոչված, «ոսկեղարում» ընկերությունները, մշտապես կիրառելով մարքեթինգային համալիրի բաղադրիչների ռազմավարություն, մրցակցային առավելությունների ձևավորման նպատակով կարիք են ունեցել դրանք կատարելագործելու: Կատարելագործումն իր հերթին առաջ է բերել նոր ներդրումների անհրաժեշտություն, իսկ նոր ներդրումները դրանք գնային ռազմավարությունների կիրառմամբ արագորեն հետ գնելու պահանջ են ստեղծել: Այս փակ շղթան, անկախ այն բանից՝ կատարվող ծախսերը արդյունավետ են եղել, թե ոչ, ընկերություններին ստիպել են շուկայական դիրքերի ձևավորման, պահպանման ու ամրապնդման և մրցակցների գործարար ակտիվությունը նվազեցնելու նպատակով իրականացնել նորանոր ներդրումներ մարքեթինգի գործողնթացում, ինչի հետևանքով վերջինները հայտնվել են համապատասխան ծախսերի յուրօրինակ «քակարդում»:

Հարց է առաջանում. հնարավո՞ր է արդյոք ժամանակակից պայմաններում շրջանցել մարքեթինգը: Առաջին հայացքից՝ իհարկե, կարելի է բավարարել սպառողի պահանջարկն առանց մարքեթինգի, եթե ընկերությունը տիրապետի շուկային և մրցակցներին առնչվող համապարփակ ու որոշակի տեղեկատվություն ունենա, բայց գործնականում հնարավոր չէ պատկերացնել նման իրավիճակ, որովհետև կան բազում չորոշակիացված իրողություններ, ինչպիսիք են.

- սպառողական վարքագիծը և այն գործոնները, որոնք ազդում են դրա փոփոխությունների վրա,
- առկա և հավանական սպառողների թվաքանակը, կարգավիճակը, սեռատարիքային կառուցվածքը,
- տեղը, տարածաշրջանը և ժամանակահատվածը, որտեղ և երբ սպառողը կատարում է իր գնումը,
- շուկան, դրա տարողունակությունը, կառուցվածքը, իրավիճակը և շուկայական ենթակառուցվածքների զարգացման մակարդակը,
- մարքեթինգային միջավայրը, դրա գործոնների ազդեցության չափը շուկայի, սպառողների և հենց ընկերության գործունեության վրա,
- մրցակցային միջավայրը, մրցակցների հնարավորությունները և ընկերության գործողություններին համարժեք պատասխաննելու կամ չարձագանքելու հավանական գործելակերպը և այլն:

Հիմնականում մարքեթինգի խոսափելու անհնարինության հետևանքով գիտության ճգնաժամն ավարտվեց միայն մարքեթինգային գործունեության արդյունավետության զնահատման մեխանիզմների մշակման և ներդրման աշխատանքներով: Սակայն ակնհայտ է, որ շատ ընկերություններ, անգամ հստակ տեղեկություններ ունենալով սեփական մարքեթինգային ծախսերի անարդյունավետության մասին, մրցակցների գործելակերպին համարժեք պատասխան տալու անհրաժեշտությունից դրդված, չեն դադարեցնելու անգամ այդպիսի մարքեթինգային գործողնթացի ֆինանսավորումը: Գիտական մակարդակում խնդիրը կարգավորվեց ռազմավարական մարքեթինգին անցնան ճանապարհով, ինչի պայմաններում, իբրև մարքեթինգային գործողնթացի վերջնարդյունք, դիտարկվում է ոչ թե օպե-

րատիվ, մարտավարական կամ մրցակցային առավելությունների ձևավորումը, այլ բացառիկ սպառողական արժեքների թողարկման ճանապարհով երկարաժամկետ ռազմավարական առավելությունների ստեղծումը:

Ուշագրավ է, որ մարքեթինգային փիլիսոփայությունն ու գործիքակազմը տարբեր երկրներում տարբեր կերպ և ուղղվածությամբ են զարգանում: Այդ հանգամանքը հիմնականում պայմանավորված է կառավարչական դպրոցների ընկալումների տարբերություններով ու շուկաների զարգացման աստիճանների անհամապատասխանությամբ: Բնականաբար, հայրենական և միջազգային մարքեթինգային գործունեությունը ևս զիտական, հատկապես գործնական մակարդակներում հավասարաշափ զարգացած չէ: Հայաստանն, այս առումով, մարքեթինգային տեխնոլոգիաներ «ներմուծող» երկիր է: Հարկ է ընդգծել, որ մեր երկրում շատ հաճախ ապրանքների արտադրությունը, վաճառքը և սպասարկումը իրականացվում են առանց մարքեթինգային որոշակի ուսումնասիրությունների: Դա պայմանավորված է նրանով, որ արտադրությունը հիմնականում չեն ցանկանում «ոչ անհրաժեշտ» ծախսեր կատարել մարքեթինգային հետազոտությունների համար, որի պատճառով էլ վերջնարդյունքում ավելի մեծ վճասներ են կրում, քան այն ծախսերը, որոնք կապահանջվեին արտադրության բնութագրերի ճշգրտման, սպառողների պահանջմունքների լիսարժեք գնահատման ու բավարարման համար: Այստեղ տեղին է հիշել Թեոդոր Լիխտի հետևյալ բանաձևը. «Մտածել գլորալ, բայց գործել լոկալ», որը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. ուսումնասիրել գործարարության միջազգային փորձը և դա կիրառել տեղական, ազգային նախազծերում: Սա միանգանայն ընդունելի է նաև մեզ համար, որովհետև Հայաստանում, անկախ շուկայական տնտեսությանն անցնամք պայմանավորված օբյեկտիվ ու սուբյեկտիվ իրողություններից, շարունակաբար մեծանալու է «ֆրական» մարքեթինգի անհրաժեշտությունը: Սակայն շուկայավարման արդյունավետ զարգացման նպատակով անհրաժեշտ է վերլուծել դրա կիրառման առանձնահատկությունները՝ բացահայտելու համար այն հիմնախնդիրները, որոնք կամ խոչընդոտում են Հայաստանում մարքեթինգի ներդրմանը, կամ պատճառ են հանդիսանում, որ մարքեթինգային փորձարկված տեխնոլոգիաները հայրենական գործարար միջավայրում յուրօրինակ ձևախեղման ենթարկվեն և առավելապես բացասական ազդեցություն ունենան ինչպես շուկայի, այնպես էլ կազմակերպությունների գործունեության վրա: Հայտնի է, որ մարքեթինգը հիմնականում կազմակերպություն-սպառող, կազմակերպություն-մրցակից, մատակարար-կազմակերպություն-միջնորդ շղթաներում կիրառվող գործընթաց է, որի վրա էականորեն ազդում են սպառողական վարքագիծը, գործընկերային հարաբերությունները, մրցակցությունն ու շուկայի հագեցման աստիճանը: Մեր վերլուծությունները նույնպես առնչվում են այդ հիմնախնդիրներին: Մասնավորապես՝ 2006-2011 թթ. ժամանակահատվածում ՀՀ գործարար միջավայրի վարքագիծը և սպառողական մշակույթի հասունության աստիճանը գնահատելու նպատակով իրականացվել են ապրանքային որոշ շուկաների և հայրենական կազմակերպությունների մրցակցային ռազմավարությունների դիտարկումներ: Ըստ այդմ՝ բացահայտվել է, որ ՀՀ-ում շահութաբերության բարձր նորման և ներքին շուկա-

յում անբարեխսիղճ մրցակցությունը հայրենական կազմակերպություններին գրկում են հասունանալու հնարավորությունից, ինչպես նաև նվազեցնում մրցակցային պայքարում արդյունավետ մարքեթինգային ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: Այսպես՝ հաշվարկել ենք ՀՀ ներմուծվող 45 ապրանքախմբերի (ըստ ԱՏԳԱԱ ուրանիշ բացվածքի) մաքսային արժեքները և դրանց գծով ներկրող կազմակերպությունների կողմից ՀՀ բյուջե մուտքագրված մաքսային վճարներն ու անուղղակի հարկերը, ապա ստացված գումարը ներկրված ֆիզիկական ծավալների վրա բաժանելով՝ ստացել ենք միավոր ապրանքատեսակի ինքնարժեքը ներմուծողի պահեստում: Այնուհետև դրան գումարել ենք բեռների պահպանման, իրացման ու առաջանցման հետ կապված առավելագույն պայմանական ծախսերը՝ ստանալու համար նշված ապրանքատեսակի գների նվազագույն շեմը: Վերջին փուլում նշված ներքին շեմերը համեմատվել են դիտարկվող ապրանքների մանրածախ ու մեծածախ գների հետ: Հաշվարկելով դիտարկված ներկրողների վաճառքի ծավալները (ըստ հայտարարագրված գների)` հասույթից դրւս ենք գրել հաշվարկված պայմանական առավելագույն ծախսի գումարն ու վերջինների վճարած ուղղակի հարկերը, ինչի արդյունքում բացահայտվել է, որ դիտարկված ապրանքային շուկաներում նվազագույն շահութաբերությունը կազմում է մոտ 45%, իսկ որոշ ապրանքատեսակների գծով, ինչպիսիք են, օրինակ՝ բրենդային հագուստը, կոշկեղենը, նոյն ցուցանիշը հասնում է մինչև 900%-ի: Եթե անգամ վերցնենք ստացված նվազագույն շահութաբերությունը, ապա կարող ենք նշել, որ դա զարգացած շուկաներում ընդունված առավելագույն շահութաբերությունը գերազանցում է մոտ 5 անգամ: Բնականաբար, նման պայմաններում կազմակերպություններին ձեռնոտու է սեփական միջոցները ներդնել ներմուծման բնագավառում, ինչի ապացույցը ոչ միայն նշված ժամանակահատվածում ՀՀ ներմուծման ծավալների զգալի աճն է (մոտ 2.9 անգամ), այլև ուղղահայաց բազմազանեցված հայկական կազմակերպությունների թվի մեծացումն ու նախկինում գոյություն ունեցողների գործունեության ոլորտների ընդլայնումը: Հատկանշական է սակայն, որ ներմուծման (առևտրի) պարագայում ընկերությունները սահմանափակում են սեփական մարքեթինգային գործառույթները, իսկ իրականացվողների զգալի մասն էլ մշակվում է արտերկրում (որոշ դեպքերում նաև համաֆինանսավորվում է արտասահմանյան բրենդը բողարկող ընկերությունների կողմից): Այսպիսով՝ հայրենական կազմակերպությունների գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների բնագավառում մարքեթինգային գործընթացը սահմանափակվում է միայն շուկայի և մրցակիցների գործունեության վերլուծությամբ ու սոցիարցումների անցկացմամբ: Հայրենական կազմակերպությունների մարքեթինգային գործունեությունն ակտիվ է հիմնականում արժեքի փոխանցման շղթայում: Ավելին, դիտարկված ապրանքային շուկաներում գործունեություն ծավալող ավելի քան 300 կազմակերպություններում անցկացված հարցման արդյունքներով դրանց դեկավարների ճնշող մեծամասնությունը (մոտ 75%-ը) մարքեթինգ ասելով առավելապես հասկանում է վաճառքի և հաղորդակցության (գովազդ, իրացման խթանման միջոցառումներ) գործընթացները: Սակայն անգամ նման պատ-

կերացումներ ունեցող կազմակերպություններում հաղորդակցությունների գործիքները և վաճառքի մեխանիզմները հիմնականում նույնպես ներմուծված են: Այսպես՝ նույն ժամանակահատվածում նշված ապրանքային շուկաների մասնակիցների լրատվաակտիվության դիտարկումների արդյունքում բացահայտվել է, որ ներկրող գովազդատու կազմակերպությունների կողմից պատվիրվող հեռուստագովազդի հոլովակների մոտ 70%-ը և ամսագրերում պատվիրվող գովազդային նյութերի մոտ 50%-ը պատրաստված են արտերկրում: Մինչև 2009 թվականը հատկապես ուսալեզու հոլովակները հաճախ չեն էլ բարգմանվել, այլ հեռարձակվել են օտար լեզվով՝ լավագույն դեպքում զուգակցվելով հայալեզու տողատակերի գետերմամբ: Նշված պատկերի մասին են վկայում նաև Հայաստանում շուկայագետների պահանջարկի վերլուծության արդյունքները: 2005-2010 թվականների ընթացքում կարիերայի կենտրոններում և հեռուստատեսությամբ մարքերունգի պահանջարկ ներկայացրած հայրենական կազմակերպությունների աշխատանքի առաջարկների վերլուծության ընթացքում բացահայտվել է, որ 70%-ին անհրաժեշտ են եղել բացառապես շուկայի զարգացման մասնագետներ (սուպերվայզերներ, պրեսսելերներ, մերչնդայզերներ), զուգաղյուղային գործակալներ և բրենդ մենեջերներ, միայն կազմակերպությունների 30%-ին են հետաքրքրել մարքերինգի ամբողջական պարբերաշրջանին տիրապետող կամ մարքերինգային հետազոտությունների մասնագետներ:

Հայաստանում մարքերինգի արդյունավետ զարգացմանը խոչընդունում են նաև մոնոպոլ մրցակցությունը և շուկաների կենտրոնացման բարձր աստիճանը: Նման իրավիճակը էականորեն սահմանափակում է ապրանքային առաջարկը, ինչի պայմաններում ընկերությունները հիմնականում նախընտրում են գնային մրցակցության գործիքներ: Այսպես՝ հայկական սուպերմարկետների ընդհանուր ապրանքային առաջարկը տատանվում է 5000-7000 անուն ապրանքատեսակների սահմաններում, ինչը մոտ հինգ անգամ փոքր է զարգացած շուկաների մասնածախ ցանցի առաջարկի մեծությունից, որտեղ այդ թիվը տատանվում է 35000-42000-ի շրջանակներում: Մյուս կողմից՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի (ՏՄՊԴԿ) հարուցած վարույթներից և հաշվետվություններից պարզ է դառնում, որ հիմնականում առաջին անհրաժեշտության ապրանքների շուկաների ճնշող մեծամասնությունում մեկ կամ առավելագույնը երկու ընկերություններ ունեն գերիշխող դիրք, իսկ հանրային ծառայություններից միայն կապի և հեռահղողակցության շուկան է խնդրատիրային (օլիգոպոլ), մնացածը մենաշնորհային (մոնոպոլ) շուկաներ են: Նման իրավիճակում, երբ փոքր և միջին թիզնեսը զարգանալու և սպառողներին այլընտրանքային առաջարկ ներկայացնելու հնարավորությունից զրկված է, շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերություններն ել մրցակցությունից իրենց «ապահովագրված» համարելով՝ իրական մարքերինգային գործընթացի կարիք, բնականարար, չեն զգում: Այս պայմաններում բացառվում է նաև գիտություն-թիզնես կապը, ինչը նվազեցնում է մարքերինգային գիտական հետազոտությունների ֆինանսավորման կամ դրանց արդյունքների ծեռքերման հավանականությունը: Այս առումով կարելի է նշել, որ հայրենական գիտական և գործարար շրջանակների ըն-

կալումները մարքեթինգի, դրա գործիքակազմի ու փիլտրավայության, ինչպես նաև ընձեռած հնարավորությունների վերաբերյալ էականորեն տարբերվում են:

Մյուս խնդիրը վերաբերում է անազնիվ մրցակցությանը և անբարեխիղ շուկայական առաջարկի մեծ մասնաբաժնին: Նույն ժամանակահատվածում դիտարկվածներից առանձնացվել են կենդանական և բուսական յուղերի, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, կարնամթերքի և պանրի, շոկոլադի, մսամթերքի, մակարոնեղենի, հագուստի, կոշկեղենի, բջջային հեռախոսների, էլեկտրական և կենցաղային տեխնիկայի շուկաները, որոնցում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ մանրածախ ցանցում վաճառվող սննդամթերքի մոտ 25%-ը ժամկետանց է, մոտ 30%-ի վրա բացակայում է բաղադրության վերաբերյալ հայերեն սպառիչ տեղեկատվությունը, 30%-ի վրա նշված են Հայաստանում դրանք ներկայացնողի մասին կամ ակնհայտ կեղծ, կամ ոչ բավարար տեղեկություններ, առաջարկվող տեսականու մոտ 45%-ը կրկնօրինակված է արտերկրի կամ հայրենական արտադրողների կողմից: Հագուստի և կոշկեղենի շուկայում կրկնօրինակումների թիվը հասնում է մոտ 60%-ի, հեռախոսի, կենցաղային և էլեկտրական տեխնիկայի շուկաներում՝ 45%-ի: Մեր հանրապետությունում հատկապես հագուստի, բջջային հեռախոսների, էլեկտրական և կենցաղային տեխնիկայի տեսականու ավելի քան 40%-ը վաճառվում է «գորշ շուկաներում» (երբ արտասահմանյան ընկերության ապրանքատեսակները դրա պաշտոնական գործընկերներին գուգահեռ վաճառում են նաև ոչ պաշտոնական գործընկերներ, որոնք պաշտոնական գործընկերող կամ բրենդը թողարկողի հետ չունեն պայմանագրային հարաբերություններ): Բացի բերված փաստերից, դիտարկվող կազմակերպությունների գործարար վարքագծի կարեռագույն ցուցիչ է հանդիսացել նաև դրանց ռազմավարության վերլուծությունը: Պարզվել է, որ հայրենական կազմակերպությունները հիմնականում մշակում են անառողջ մրցակցության ռազմավարություն՝ նախապատվությունը տալով «սև PR-ի» հնարավորություններ ընձեռող ոչ գծային ռազմավարություններին (որոնք շեշտադրում են բամբասանքների ինստիտուտի զարգացումը), իսկ մարքեթինգային ռազմավարությունները հաճախ դիտարկվում են իրեն սպառողների ուշադրությունը շեղելու և բարեխիղ մրցակցության նմանակման գործիքներ: Այսպես՝ նույն ժամանակահատվածում մանուլում հրապարակված թիզնես տեղեկատվության վերլուծության արդյունքները վկայում են, որ հաճախակի են հանդիպում պատվիրված, ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող, տվյալ կազմակերպության բարի համբավն ու քողարկած արտադրանքը սևացնող հոդվածներ, որոնք էապես փոխում են շուկայական իրադրությունը ու մրցակցային միջավայրի պատկերը: Նման քաղաքականություն վարվել է սուրճի, գազավորված և չգազավորված ջրերի, կենդանական յուղերի և ալկոհոլային ըմպելիքների հայկական շուկաներում: Ալդարության դեմ չմեղանչելու համար պետք է նշել, որ նման իրավիճակներում հայտնվող կազմակերպություններն են մեղքի իրենց մասնաբաժինն են ունեցել՝ գովազդային արշավներում և սեփական արտադրանքի փաթեթավորման վրա ներկայացնելով ակնհայտ կեղծ տեղեկություններ: Վերջին երեք տարիների ընթաց-

քում ՀՀ ՏՄՊՊԿ հարուցած վարույթների արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպությունները գնային մրցունակություն ձեռք բերելու նպատակով էապես շեղվում են ապրանքների սերտիֆիկացմանը վերաբերող պետական պահանջներից՝ օգտագործելով էժանագին հավելանյութեր, որի մասին չեն տեղեկացնում սպառողին: Առավել աղմուկ բարձրացրած դեպքերից են պանրի, սփրեդի, կաթնամթերքի և բնական ջրերի շուկաներում արված բացահայտումները: Ի դեպ, խախտումներ կատարած ընկերությունները հաճախ աչքի են ընկերում մարքեթինգային ակտիվ գործունեությամբ: Դիտարկենք մեկ մասնավոր դեպք: Խվում էր՝ կաթնամթերքի շուկայում մարքեթինգային տեխնոլոգիաներն առավել գործադրելի են. այս շուկայի երկու հիմնական ներկայացուցիչները՝ «Աշտարակ կաթ» և «Դուստր Մարիաննա» ընկերությունները, կիրառում էին շուկայական նոր (ուսումնական) հատվածների ձևավորման և յուրացման խելամիտ քաղաքականություն՝ ներդնելով դիետիկ ապրանքատեսակներ: Սակայն անցած տարվա ընթացքում կատարված վերլուծությունների արդյունքները ցույց տվեցին, որ այս ընկերություններն իրականում առավելությունների հասել են անբարեխիղճ մրցակցության մերդուներով՝ իրենց արտադրանքում ավելացնելով կոկոսի էժանագին յուղ, որը բացցրել են սպառողից: Ավելին, մեկ տարի առաջ «Աշտարակ կաթ» ընկերությունը նման իրավիճակում արդեն հայտնվել էր պանրի արտադրության մեջ սոդայի մեջ չափարաժնի օգտագործումը բարցնելու հետևանքով: Բացի այդ, քիչ չեն նաև հայրենական կազմակերպությունների կողմից գերիշխող դիրքի չարաշահման և գների շիմնավորված բարձրացումների գծով վարույթները:

Բնականաբար, այս դեպքում խախտվում են «Ապրանքների սպասարկման նշանների», ապրանքների ծագման տեղանունների մասին», «Ֆիրմային անվանումների մասին», «Ներքին շուկայի պաշտպանության մասին», «Գների և հակագնազգման մասին» «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով սահմանված մի շարք պահանջներ: Սակայն նմանատիպ խախտումների պարագայում, երբ նշված ընկերությունների վաճառքի ծավալները գրեթե չեն փոփոխվում, կարծում ենք, դրա հիմնական պատճառը սպառողական մշակույթի բացակայությունն է: Այսինքն՝ երբ սպառողական նախասիրություններն ու ապրանքներին վերաբերող պահանջները բարձր չեն կամ ձևական բնույթ են կրում, հայրենական կազմակերպությունները բացառիկ արժեք թողարկելու կամ ներկայացնելու անհրաժեշտություն չեն գտում, ինչը ևս էական խոշընդուռ է համարվում մարքեթինգի զարգացման համար՝ պատճառ դառնալով ՀՀ գործարար միջավայրում ներդրվող մարքեթինգային տեխնոլոգիաների գործարար կողմնորոշման մեջ գերակայություն է ստանում մարքեթինգի առևտրային ջանքերի խթանման հայեցակարգը, ըստ որի առաջնահերթ նպատակ է դառնում «գնման հակված» սպառողների «արտադրությունը»: Այնուամենայնիվ, անհնար է ընդունել, որ մարքեթինգը, գործառույթների ու գործիքակազմի որոշ ձևափոխումներով, դարձել է հայրենական կազմակերպությունների տնտեսական գործունեության և ՀՀ Կառավարության երկարաժամկետ

զարգացման ծրագրերի առանցքային բաղադրիչը: Բացի այդ, ինչպես կառավարական, այնպես էլ գործարարության մակարդակներում սկսում են գիտակցել, որ մարքեթինգը հնարավորություն է ընձեռում պահպանելու կենսունակությունը ճգնաժամային իրավիճակներում: Խոսքը վերաբերում է մշտապես փոփոխվող իրադրություններում ռեսուրսային ներուժի ճիշտ օգտագործման ուղիների ու հնարավորությունների բացահայտմանը:

Ամփոփելով նշենք, որ այսօր մարքեթինգը ներթափանցել է կյանքի բոլոր ոլորտները, և, առանց համապատասխան գիտելիքների ու կառավարման, հնարավոր չեն հաջողություններ արձանագրել ոչ միայն գործարարության, այլև մյուս բնագավառներում և անգամ քաղաքականության մեջ: Ուստի, գիտատեխնիկական առաջընթացի, համընդհանրացվող ու փոխկապակցված համերկրային տնտեսության ներկա պայմաններում անհնարին է շրջանցել մարքեթինգը և երկարաժամկետ դրական արդյունքներ ապահովել որևէ բնագավառում:

АРАРАТ ЗАКАРЯН

*Заведующий кафедрой „Маркетинга“
АГЭУ, доктор экономических наук,
профессор*

АРМЕН ГРИГОРЯН

*Доцент кафедры „Маркетинга“ АГЭУ,
кандидат экономических наук*

Маркетинг и мы: возможно ли обойтись без маркетинга? - В статье рассматриваются определенные задачи, которые показывают место и роль маркетинга в современном обществе. Мы показываем необходимость маркетинговых исследований и внедрения их основных принципов во все сферы человеческой деятельности. Таким образом, становится ясно, что обходить маркетинг в нынешних условиях глобализации не только не возможно, но и нецелесообразно.

ARARAT ZAKARYAN

*Head of the Chair of „Marketing“ at
ASUE, doctor in Economics, professor*

ARMEN GRIGORYAN

*Associate professor at the Chair of
„Marketing“ at ASUE, PhD in
Economics*

Marketing and we: can we do without marketing? - Some specific issues showing the place and role of marketing in the society nowadays are being considered in the given paper. The necessity of marketing research and the introduction of its main principles into all spheres of human activity are pointed out, as well as, it is emphasized that it's both impossible and unreasonable to evade the issue of marketing in current conditions of globalization.